

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ԼՈՒՄԱՅ» ԱՄՍԱԳՐԻ

ՖՐԵՏԵՐԻ ՄԻՍԹՐԱԼ

—

Մ Ի Ր Ե Ց Օ

Փրովանսականի թերուած

—

Դննական ուսումնասիրութեամբ մը

թարգմանեց
ԱՐՃԱԿ ԶՈՊԱՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍ — 1906
Տպարան Քութաթելաձէ

ՔԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՀԻՐՈՒԹԻՒՆ

ԳՐԵՏԵՐԻ ՄԻՍԹՐԱԼ

Ա.

Նոպելեան գրական մրցանակը—100,000 ֆրանք—անցեալ տարի յատկացուեցաւ Ֆրետերի Միսթրալին։ Սթոքուլմի Ակադեմիային այդ որոշումը ամենէն արդար և նպատակայարմար որոշումներէն մին էր որ երբեք տրուած ըլլան նմանօրինակ պարագաներու մէջ։ Միսթրալ նոր ժամանակներու մեծագոյն քանատեղներէն մէկն է և միանգամայն հոյակապ գործիչ մը։

Մեր մէջ, Միսթրալի գործն ու նոյն իսկ անունը գրեթէ բոլորովին անձանօթ են. և սակայն այդ գործը մեզի համար կրկնապէս շահեկան է և մենէ մասնաւորապէս սիրուելու արժանի, որովհետև Միսթրալ իր գործով և իր կեանքով ամենէն մեծ դասը կուտայ ազնիւ և ուշիմ ցեղասիրութեան։ Այն հզօր ու մաքուր հանճարովը որով բնութիւնը զինքն օժտած էր, Միսթրալ կրնար՝ եթէ ֆրանսերէն լեզուով ուզէր արտայայտել իր ներշնչումները՝ ֆրանսական գրականութեան մէջ գրաւել ամենէն կարևոր տեղերէն մին, Հիւկօներուն, Լամարթիններուն կարգին վրայ. Փրովանսի զաւակ, ան նախընտրեց իր փոքրիկ հայրենիքին լրուած, մոռցուած, աղաւաղուած բարբառը վերակենդանացնել, յղկել, գրական լեզուի մը բարձրութեան հասցնել և ստեղծել փրովանսական գրականութիւն մը որ, ֆրանսական գրականութեան հետ քով քովի, մասնայատուկ չնորիով ու զօրութիւնով մը՝ ուրոյն գոյութիւն մ'ունենալու իրաւունքն ապացուցանէր, եւ հասաւ իր նպատակին։ Այսօր, կայ փրովանսական նոր գրականութիւն մը, ճոխ, թարմ, ինքնատիպ, և որ կը հաշուէ քանի մը հրաշակերտներ զոր աններելի պիտի ըլլար անգիտանալ՝ Եւրոպայի ժամանակակից ընդհանուր գրականութեան ծանօթանալ ուզող մտաւորականի մը համար։ Այդ հրաշակերտներէն մէկն է Միլիկյոն, Միսթրալի ամենէն հանրածանօթ քերթուածը, որուն հայերէն թարգմանութիւնը կուգամ ներկայացնել մեր հասարակութեան, Միս-

Թրավի բովանդակ գործին ինչպէս և փրովանսական վերածնութեան գեղեցիկ երևոյթին վրայ ուսումնասիրութեամբ մը:

Բ

Փրովանսը Հարաւային Ֆրանսայի այն մասն է որ կը կազմուի՝ այժմնան անուանակոչութեամբ Պուշտիւ-Ռոն, Վառ, Պաս-դ-Ալփ նահանգներէն և Վոքլյու և Ալփ-Մարիթիմ նահանգներու մէկ հասուածէն։ Ազգաբնակութիւնը սկզբնապէս կադմուած էր Լիգուրիական և Կավարեան ցեղերէն։ Կավարեանը կը գրաւէնի Ռոնի, Տիւրանսի և Իզէրի մէջանեղ գտնուող երկիրները, Խպերօ-Լիգուրիացիք՝ Պիրինեաններէն մինչև Ռոնը, ծովեղերեան մասը կը բոնէին, Կելտօ-Լիգուրիացիք՝ Ռոնէն մինչև Ալպեանները, և բոն Լիգուրիացիք՝ Ալպեաններէն մինչև Ռոնը։ «Յոյները, կ'ըսէ Միսթրալ, «Լիգիացի» կանուանէն այդ ժողովուրդները, ինչ որ՝ ըստ Հերմասի՝ կը նշանակէ դաշներդու (տելօւթեամբ)։ Փեղորսին մէջ, Պղատոն ըսել կուտայ Սոկրատին՝ «Եկէք, Մուսաներ, դուք զոր Լիգիա կ'անուանեն, թէ ձեր երգերուն նկարագրին համար, թէ Լիգիացւոց՝ այդ այնքան երաժիշտ ժողովրդին՝ պատճառով։ Յետոյ, փիւնիկեցիք եկան վաճառականական գաղութներ հաստատեցին այդ երկը ին ծովեղերեայ մասերուն մէջ, ու անոնցմէ յետոյ Յոյները (փոկացիք) Քրիստոսէ առաջ 600 թուին եկած և հիմնած են։ Մարսիլիան, և հաստատած են հոն հզօր գաղութ մը որ, հետզհետէ ստուարացած, տարածուած, ուժեղցած է և ստեղծած նաև շրջակայքը՝ Անտիպոլիս (Անթիպ), Նիսէա (Նիս), փորթուա Հերքուլիս (Վկլֆրանշ) քաղաքները Միջերկրականի ափունքին վրայ ու ցամաքին ներսերն ալ բաւական հեռու տարածած է իր տիրապետութիւնը։ Յոյն աարը ամենէն ուժեղ բաժինը կազմած ըլլալ կը թուի փրովանսական ցեղին գոյացման մէջ։ յունական նկարագրը, ճաշակը, ոգին շատ ցայտուն կերպ ովկ կը զգացուին փրովանսցւոց կենցաղավարութեան ու գեղեցկագիտութեան մէջ։ փրովանսցի թէ հին և թէ նոր բանաստեղծները «յոյն» են աւելի ճոխ, որոշ ու բնական կերպով բան Փրանսացի բանաստեղծները։ Միսթրավի ազգականութիւնը Հոմերներուն, թէուրիաններուն ու Լոնգուսներուն հետ՝ իր դասական խորին ու գորովոտ ուսումնասիրութեանց արդիւնք չէ լոկ, այլ մասնաւոր ցեղական ներքին ժառանգականութեան մը։ ինքն իսկ իր «Որփէոսի զաւակները» քերթուածին մէջ, զոր

գրած է Կրետէի 1867 ի ապստամբութեան առթիւ կը հոչակէ
իր ցեղին այդ գերազնիր ծագումը

«Եառաւիղներն ենք մենք անմահ Յունաստանին,
թու զակներդ ենք, Որփէոս, մարդ աստուածային»:

Մարսիլիոյ Յոյներն են որ Հոռվմայեցիները իրենց օգ-
նութեան կանչելով Լիգուրիացւոց դէմ, անոնց ի Գաղղիա մուտ-
քին սկզբնապատճառը եղան: Հոռվմայեցիք եկան նախ 155-ին
(Ք. Ա.), յաղթեցին Լիգուրիացւոց և իրենց դաշնակից Մարսի-
լիացւոց թողլով գրաւուած երկրները՝ հեռացան. ութսուն-
տարի յետոյ, երբ Մարսիլիացիք նորէն զանոնք կանչեցին,
Հոռվմայեցիք եկան դարձեալ, բայց այս անգամ մասամբ ի-
րենց տիրապետութեան տակ պահեցին գրաւուած երկիրները՝
ու 20 թուին (Ք. Ա.) Փրովանսը Հոռվմէական պետութեան
մէկ նահանգը կազմեց՝ հիւլատոսի մը վարչութեան յանձնուած.
և Պրօնիուա րոմա (Հոռվմէական նահանգ) անուանակոչութե-
նէն է որ ձեւացած է նոյն իսկ փրովանսա անունը, Մինչև Դ.
դարը Գալլօ-Հոռվմէական քաղաքակրթութիւնը տիրապետեց
այդ երկրին մէջ: Բարբարոսաց շրջանին, Վիսիգոթները, Ռատ-
րոգրթները և Փրանկները արշաւեցին Փրովանս, որ, երկար
արիւնահեղ պայքարներու մէջ բգժտուելէ յետոյ, 933-ի դաշ-
նադրութեամբ՝ Արլի թագաւորութեան մաս կազմեց. այդ թա-
գաւորութիւնը սակայն, խախուս և պառակտուած մնաց միշտ.
արքաները չկրցան միահեծան ու գերազօր իշխանութիւն մը
տարածել եկեղեցական ու աշխարհական աւատապետներուն
դէմ, որոնք անընդհատական կորիւի մէջ էին իրարու և արքա-
յին հետ: 1113-էն յինչև 1246, Պարսըլոնի Պերանժէ քաթալան
գերդաստանէն կոմսեր գրաւեցին Փրովանսի գահը: Այս շրջա-
նին է որ պայթեցաւ Ֆրանսայի Հիւսիսին և Հարաւին
միջն մեծ պայքարը, որ պիտի յանգէր Հարաւին ջախջախման:
Պայքարին սկզբնապատճառն ու դրգիչը եղաւ Խնովկինստիու
Գ. պապը որ հարաւային Ֆրանսայի մէջ տիրող ներողամիտ,
աղատասէր ոգիէն վրդոված և անոր շնորհիւ հոն տարածուած
կարգ մը հերձուածներուն, մամնաւորապէս քաթար» կոչուած
ու Պաւլիկեանց սկզբունքներն յիշեցնող աղանդի մը դէմ մո-
լեզնած, հրաւէր կարդաց Հիւսիսի կաթոլիկ իշխաններուն և
խաչակրութիւն մը յարոյց Հարաւին դէմ. Սիմոն տը Մոնֆոր
Փրանսացի կոմսը, մոլեռանդ կաթոլիկ և արի զինուորական,
որ արդէն Պաղեստին գացած հինգերորդ խաչակրութեան հետ
և Սարակինուներուն դէմ մեծ քաջութեամբ կոռուած, խաչակրու-
թեան գլուխն անցաւ, և յարձակեցաւ Լանկտոքի վրայ, և հակա-

ուակ ուժեղ դիմագրութեան Թուլուզի կոմս Ռեմոն է. ին, որուն օգնութեան հասան ուրիշ իշխաններ ալ, գրաւեց բոլոր կարեւոր քաղաքները և իվերջոյ Թուլուզն ալ. Սիմոն աը Մոնֆորի մահէն յետոյ, իր որդին՝ Ամորի՝ Հկրցաւ նոյն ուժգնութեամբ շարունակել պայքարը, և իր հօրմէն ժառանգած իրաւունքները յանձնեց Փրանսայի թագաւորին Լուդովիկոս Բ. ին. այդ պահուն Ռեմոն է, յաջողած էր վերստին տիրանալ կորսուած երկիրներուն. Լուդովիկոս Բ. այժմ ինքն իսկ ձեռք առաւ պայքարը և նորէն նուաճեց Հարաւը. Լուդովիկոս Թ. ի օրով, պատերազմը վերսկսաւ. վերջի վերջոյ Ռեմոն է. և Լուդովիկոս Թ. Փարիզի մէջ կնքեցին հաշտութեան դաշինք մը, որով երկիրները բաժնեցին մէջերնին, Ֆրանսայի թագաւորը առիւծի բաժինը իւրացնելով, Ռեմոն իրեն պահելով քանի մը մասեր միայն, պայմանով սակայն որ իր մահէն յետոյ իր միակ աղջիկը պիտի ամուսնանար Լուդովիկոս Թ. ի եղբայրներէն մէկուն հետ, ինչ որ ամբողջ Լանկատորին Ֆրանսայի միացման նախապատրաստութիւնն էր:

1240 էն 1247 Հարաւը նոր ճիգեր փորձեց Ֆրանսայի լուծը թոթվելու, և գարձեալ Հարաչար ջախջախուեցաւ. Սէն Լուի թագաւորը տարբեր թաքթիք մը բռնեց, քաղցր ու բարեկամական վարմունք մը ցոյց տուաւ, այդ երկարատև պայքարէն քայքայուած հարաւցի ժողովրդին գոհացումներ, դիւրութիւններ ջնորհեց, և այդպէսով սիրաշահելով զանոնք՝ վերջնապէս միացուց Փրանսական միապետութեան:

Փրովանսը մասամբ միայն հաղորդ էր եղած այդ պայքարներուն և այդ ջախջախումներուն: Բայց Սիմոն աը Մոնֆորի խաչակրութեան յաղթանակը՝ հիւսիսային Ֆրանսայի գերակշութիւնը վերջնապէս հաստատած էր Հարաւին վրայ, որ, սնանկացած, քանդուած, արիւնաքամ եղած, ալ իր նախկին ուժն ու փայլը կորսնցուցած էր առյաւէտ: Փրովանս զեռ մէկ ու կէս դար անկախ մնաց, բայց խախուս անկախութեամբ մը որ վերջնապէս յանգեցաւ ձուլման:

1246-էն մինչև 1481 Փրովանսի վրայ թագաւորեց Անժու գերդաստանը որ, Փրովանսէն զատ՝ իր իշխանութեան տակ ունէր Անժուի և Մէնի կոմսութիւնները, և Նափոլին ու Սիկիւնան, թէպէտ այս վերջիններու վրայ իր սիրապետութիւնը գրեթէ անուանական էր: Ֆրանսայի մեծազօր թագաւոր Լուդովիկոս ԺԱ-ի օրով, Փրովանսը միացաւ Փրանսական թագաւորութեան Կարոլոս Գ. Փրովանսի թագաւորը, իր մահէն առաջ (1481) հանդիսաւորապէս իրեն ժառանգորդ յայտարեց:

իրը թագաւոր Փրովանսի՝ Լուդովիկոս ժԱ.ը, պայմանով որ Փրովանսի և յարակից երկիրներուն ազատութիւնները, սովորութիւններն ու հիմնական օրէնքները պիտի պահպանուէին: Փրովանսի և շրջակայ երկիրներու իշխանները ժողով գումարելով էրսի մէջ՝ 1486-ին, գրեթէ միաձայնութեամբ որոշեցին ֆրանսայի թագաւորին իշխանութիւնն ընդունիլ՝ նկատելով որ առանձին անկարող պիտի ըլլային զիրենք պաշտպանել թշնամիններու յարձակմանց դէմ, պայմանով սակայն որ Փրովանսը պիտի միանար և ոչ խառնուէր ֆրանսային, ու ֆրանսայի թագաւորը «Փրովանսի կոմս» տիտղոսը պիտի կրէր այդ երկիրն վերաբերեալ իր բոլոր պաշտօնական գրութեանց մէջ: Միայն Ավինեռն քաղաքը որ պապերու աթոռանիստ քաղաք էր եղած 1309էն 1377, և զոր 1348-ին Կղեմէս Զ. պապը գնած էր Փրովանսի իշխաններէն, մնաց կալուած պապական՝ մինչև ֆրանսական Մեծ յեղափոխութիւնը: Միացումէն յետոյ, Փրովանսի պատմութիւնը ուրիշ բան չէ բայց եթէ աստիճանական սահում մը դէպի ձուլում:

Սկիզբները, քանի մը անգամ, այդ ձուլումին դէմ փրովանսգիք ընդվլումի փորձեր ըրին: Հենրիկոս Դ. բողոքական թագաւորին օրով, բողոքականութեան դէմ մարտնչող համբաւաւոր Լիկը բաղմաթիւ և կրակոտ մասնակիցներ ունեցաւ Փրովանսի մէջ. այդ պայքարին աջակցելով, Փրովանսի ազնուականութիւնը աւելի՝ այդ առթիւ՝ կորսուած անկախութիւնը վերագտնել կը նկրտէր քան պաշտպանել կաթոլիկութիւնը որ Հարաւային ֆրանսայի մէջ շատ քիչ ունէր մոլեռանք կուսակիցներ: Միշլիէօի օրով, որ կարգ մը կարենր որոշումներ տուաւ Փրովանսի ֆրանսացումը փութացնող, ապստամբութիւն մը ծագեցաւ Փրովանսի մէջ, «էասքութէցուս»-ներու (բոժոժակիր) ապստամբութիւնը, զոր Քոնտէ եկաւ ջախճախեց 1630-31-ին: 1647-ին նոր և, աւելի ծանր ու երկայն ապստամբութիւն մը պայթեցաւ նորէն, առանց յանգելու Փրովանսցւոց բաղձացած արդիւնքին:

1660-էն սկսեալ, դիմադրութեան շարժումը թուլցաւ, ու վարչական կերպոնացման սիստեմը զոր ֆրանսայի թագաւորները կը ձգտէին հետզնետէ տարածել իրենց ձեռքին տակ գտնուող բոլոր երկիրներուն վրայ, Փրովանսի մէջ վերջնապէս արմատացաւ: Պաշտօնական գրութեանց մէջ փրովանսերէնընախ ֆրանսերէնին հետ հաւասարապէս կը գործածուէր. երբ ֆրանսուա Ա. արգիւեց փրովանսերէնի գործածումը պաշտօնական գրութեանց մէջ, ան մնաց միայն իբր խօսակցութեան լեզու՝

ժողովրդին բերանը, հետզինեաէ աղաւաղուելով. աղատ և անկախ երկրի ձեւ մը կը պահուէր դեռ. խորհրդարաննը կը մասր և որոշ չափով ազդեցութիւն ունէր, համայնքներու ժողովները կը պաշտօնավարէին, գաւառական գործակալներ էին որ տուրքերը կը հաւաքէին և անոնց գործածութիւնը կորոշէին, ու ինքնակամ ձեռվ մըն էր որ Փրովանսը կը մասնակցէր Ֆրանսական թագաւորութեան սովորական ծախքերուն. Բայց հետզհետէ այդ ներքին վարչութեան քով հաստատուած Ֆրանսական վարչութիւն մը իր ազդեցութիւնն ու զօրութիւնը կը բազմապատկէր, առաջնութիւնը կը ստանար, Ֆրանսայի թագաւորին նշանակած պատգամաւոր—կառավարիչը, Ֆրովանսի հին կոմսերուն տեղը կը բռնէր. յետոյ, եկան թագաւորին կողմէ կարգուած գաւառապետները, որոնք քիչ քիչ իշխանութիւնը բոլորովին իրենց ձեռքն առին, ժողովները վարեցին, դատական մարմիններն ու թաղապետական վարչութիւնները իրենց հսկողութեան տակ դրին, նոր տուրքեր հաստատեցին, անոնց հաւաքումը իրենք իսկ կատարեցին, անոնց հասոյթին մեծագոյն մասը կեղրոնական գանձուն յատկացնելով և Փրովանսի տեղական պէտքերուն շատ փոքր մաս մը թողլով:

Ֆրանսական յեղափոխութիւնը վերջին հարուածը տուաւ և մինչեւ այն ատեն պահպանուած անկախութեան «Երևոյթներն» ալ ջնջեց. Օգոստոս 4-ի համբաւաւոր նիստին մէջ Փրովանսի պատգամաւորներն իրենք իսկ յայտնեցին թէ իրենց ժողովուրդը կը հրաժարէր իր մասնաւոր առանձնաշնորհումներէն. 1789 ի գեկա. 29 ի հրովարտակը Փրովանսի վարչական ինքնուրոյն զոյութեանը վերջ գրաւ՝ զայն բաժնելով երեք Ֆրանսական «տեփարթմանախ», Պուշտիւ-Ռոն, Վառ, Պաս-դ-Ալիր.

Ինչպէս կը տեսնուի, Հարաւային Ֆրանսան երբեք չէ ունեցած քաղաքականապէս՝ ամուր ու տարածուն զօրութիւն մը. բաժնուած բազմաթիւ հակառակորդ իշխանապետութիւններու, Ֆրանսայի Հարաւը, միշտ պառակառուած, չէ կրցած կազմել ուժեղ կորիզ մը՝ տևական պետութեան մը կեղրոն դառնալու համար՝ հակառակ իր ժողովուրդներուն հերոսական քաջութեան, ընկճուած է՝ կեղրոնական ուժի մը պակասէն—ճիշտինչպէս մեր Հայաստանը: Քաղաքակրթական ոլորտին մէջ է որ Հարաւային Ֆրանսան ցոյց տուած է ինքնարուխ մեծ և ազնիւ ուժ մը. Հիւսիսային Ֆրանսայէն շատ առաջ, այնտեղ ծաղկած է նուրբ ու վեհողի բանաստեղծութիւն մը, և աղատական, ռամկավարական ողի մը՝ յոյն—լատին քաղաքակրթութենէն.

ուղղակի ժառանգուած. եթէ Հիւսիսի ուժեղ հակառակորդը զինքը ջախջախած ըլլար, անտարակուսելի է որ Փրովանսը պիտի շարունակէր իր քաղաքակրթական զարգացումը հետզինտէ աւելի փայլով, քաղաքականապէս ալ թերևս համնէր զօրանալու, և տիրապետէր նոյն իսկ ամբողջ Ֆրանսայի մէջ։ Միսթրալ, իր Քալէնտալին նօթերուն հետևեալ հատուածին մէջ սապէս կը բանաձեւ իր կարծիքն այս մասին։

«Թէպէսև խաչակրութիւնը՝ որուն գլուխը կը գտնուէր Սիմոն տը Մոնֆոր՝ երեւութապէս միմիայն Հարաւի հերետիկուներուն դէմ և յետոյ Թուլուզի կոմսին դէմ ուղղուած էր, Փրովանսի ազատ քաղաքները սրանչելապէս հասկցան որ այդ կրօնական պատրուակին տակ ցեղական ոսոխութիւն մը կը թաքչէր. և թէպէտ շատ խորապէս կաթոլիկ, խաչակիրներուն դէմ ելան յանդինօրէն»։

«Պէտք է ըսել, արդէն, թէ ազգայնութեան այդ հասկացողութիւնը ինքնարերաբար երևան եկաւ, այն բոլոր երկիրներուն մէջ ուր կը տիրէ «օք» ի լեզուն, Ալպեաններէն մինչեւ հասքոնիի ծոցը և Լուարէն մինչև էպրօն։ Այդ ժողովուրդները, որ միշտ իրարու համակիր եղած էին՝ կիմայի, բնազդներու, բարբերու, դաւանանքներու, օրէնսդրութեան և լեզուի նմանութեամբ, այդ թուականին պատրաստ էին Միացեալ գաւառներու Տէրութիւն մը կազմելու։ Իրենց ազգայնութիւնը, թրուպատուրներու երգերովը յայտնուած ու տարածուած, արագօրէն հասունցած էր տեղական ազատութեանց արևուն տակ։ Որպէսզի այդ ցրուած ուժը ինք իր գիտակցութիւնը ստանար, առիթ մը միայն պէտք էր, պատերազմ մը ուր բոլորն ալ նոյն շահերով կապուած ըլլային։ Այդ պատերազմը ծագեցաւ, բայց դժբախտ պարագաներու մէջ։

«Հիւսիսը, հոռվմէական եկեղեցիին ձեռքովն իսկ զինուած, վայելելով աջակցութիւնն այդ ահագին զօրութեան որ՝ խաչակրութեանց մէջ՝ եւրոպան Ասիոյ վրայ արձակած էր, իրեն իսպաս ունէր քրիստոնէական աշխարհին անհամար զանգուածները, և իրեն օգնական՝ մոլեռանդութեան բորբոքումը։

«Հարաւը, ամբողջութեամբ հերձուածող նկատուած՝ ինչ որ ճիշտ չէր, քարոզիչներով պաշարուած, Հաւատագննութենէն աւերուած, կասկածելի դարձած իր բնական դաշնակիցներուն և պաշտպաններուն (ի միջի այլոց՝ Փրովանսի կոմսին), ճարպիկ ու կորովի պետի մը պակսելովը՝ աւելի դիւցազնութիւն ցոյց տուաւ քան միաբանութիւն ու ջախջախուեցաւ։

«Կերևայ թէ պէտք էր որ այդպէս ըլլար, որպէս զի ին-

Դալլիան արդի Ֆրանսան դառնար։ Միայն թէ, Հարացիք պիտի նախընարէին որ ատիկա աւելի սիրալիր կերպով մը եղած ըլլար, և պիտի բաղձային որ ձուլումը դաշնակցական ռեժիմէ մը անդին անցած չըլլար։ Մեծ դժբաղդութիւն մըն է միշտ, երբ՝ յանկարծակիլ գալով, քաղաքակրթութիւնը կը ստիպուի տեղի տալ բարբարոսութեան, և «Փրանշիման, ներուն յաղթանակը յառաջդիմութեան ընթացքը երկու դար յետաձգեց, որովհետեւ, ինչ որ հպատակեցաւ, ոչ այնքան Հարաւն էր նիւթապէս, այլ Հարաւի ոգին։ Ռեմոն է. Թուլուզի վերջին կոմսը, իր երկիրները նորէն ձեռք անցուց, և 1229-ին զայն իր ազատ կամբովը յանձնեց Լուլովիկոս թ.-ին։ Փրովանսի թագաւորութիւն—կոմսութիւնը զեռ երկար ատեն տեսեց, և 1486-ին է որ մեր հայրենիքը ազատօրէն ինքզինքը կցեց Ֆրանսային, ոչ թէ ինչպէս երկրորդական մը զլիսատրի մը, այլ ինչպէս զլիսատր մը զլիսատրի մը։ Բայց բնիկ հոյզը որ նոր, վայելչաճն, ասպիտական բանաստեղծութեան մը մէջ փթթած էր, հարաւական յանդքնութիւնը որ արդէն կազմատագրէր մտածումն ու գիտութիւնը, քաղաքապետական (տոնիցիպալ) թոփչը որ մեր քաղաքները մէկ մէկ հանրապետութիւն էր ըրած, հանրալին կեանքը՝ վերջապէս՝ որ մեծակոհակ կըշարժէր բոլոր ազգին մէջ, բարեկրթութեան, անկախութեան ու առնականութեան բոլոր այդ աղբիւրները ցամքած էին, աւաղ, ու դարերով պիտի մնային ցամքած։»

Փրովանսական լեզուն ու գրականութիւնը, այսպէս՝ շատ կանուխէն մշակուած ու զարգացած, Փրովանսի քաղաքական սահմաններէն աւելի հեռուն տարածուած են, մինչև Կասքոներ և Քաթալոնիա, (ուր փրովանսերէն լեզուն մշտապէս հաստատուած է), ու նոյն իսկ՝ ատեն մը՝ հիւսիսային Խտալիա։ Գրականութիւնը, սկսած՝ թ. դարուն, և իր գերագոյն փայլին հասած ժի. դարուն, ժողովրդական նկարագիր չունի, այլ էականապէս ազնուապետական, որովհետեւ Արքունիքի գրականութիւն մը եղած է։ «Թրուպատուրժները կերգէին ոչ թէ ժողովրդին համար, այլ փրովանսական արքունիքին, ազնուականներու դղեակներուն մեծ հանդէսներուն մէջ կերթային շողացնել հըմայքը իրենց քերթողական արուեստին, զոր կըկոչէին զզուարթ գիտութիւն (gai sâbe)։ Եւ արդէն նոյն իսկ ազնուականները, տոհմիկ կիները, մինչև անգամ իշխանապեանները, խոնարի դասակարգէ բանաստեղծները խրախուսելն ու տօնելը բաւական չհամարելով, իրենք ալ կը քերթէին։ իրենց կեանքին ամենամեծ զարդն ու հաճոյքը՝ բանաստեղծական մրցանքներն

էին, որոնց կըմասնակցէին թէ արհեստական աշուղները և թէ սեպուհները, իշխանապետներն ու իշխանները, մրցանքներ որոնց նիւթը գրեթէ միշտ սէրն էր. հաստատուած էին նոյն իսկ «Սիրոյ արքունիքներ, որոնց կընախագահէին սիրոյ և բանաստեղծութեան արուեստին մէջ քաջանուած ճանչցուած տիկիններ. էսոնք, ունկնդրելէ յետոյ, սիրային հարցի մը վրայ մըցողաբար արտասանուած ու այլազան զգացումներ արտայայտող տաղերը, վճիռ կարձակէին՝ ու մրցանակը կը շնորհէին այն բանաստեղծին որ՝ ըստ իրենց՝ լաւագոյն լրւծումը տուած էր սիրային հանելուկին:

Քիչ ունենալով ուրեմն տեղական, ժողովրդական մասնայտուկ զրոշմ, ընդհակառակն՝ նուրբ ու բարձր ընկերութեան մը համար և նոյն իսկ անոր մասնակցութեամբ յօրինուած ըլլալով, փրովանսական գրականութիւնը, ընդհանրական, մտային, և հարկաւորաբար՝ արուեստական նկարագիր մը ստացած, հասկանալի էր և հրապուրեիչ ու է ժողովրդի համար. և ատով՝ է որ տարածուեցաւ՝ գրեթէ ամբողջ աւատական Եւրոպային մէջ, ու մասնաւորապէս Հիւսիսային Ֆրանսա, Գերմանիա և Իտալիա, և այդ երկիրներուն մէջ քնարերգութեան զարթումին առաջնորդ եղաւ:

Փրովանսական այդ ին գրականութեան ամենէն փայլուն մասը կը կազմէ քնարերգական բանաստեղծութիւնը, որ ծանօթ է քօէսիօ cortoiso անունով, բառ մը որ «արքունիք» (couir) բառէն ածանցուած է և կը նշանակէ միանգամայն «արքունական», «բարեկիրթ» և «կնանածոյ». այդ երգերը իրենց գլխաւոր նիւթ ունէին սէրը, բայց սէր մը՝ ոչ բնագրական պարզութեամբ զգացուած ինչպէս ժողովրդական երգերու կամ զգայնական բանաստեղծներու մէջ, այլ ինչպէս զայն կ'ըմբռնէր յղկուած ու բարակցած, արիւնով ու հոգւով «ազնուական» ու «բարեկիրթ» ընկերութիւն մը:

Այդ սիրերգներուն մէջ տիրող ըմբռնուակին հիմքը կը կազմէ կնոջ բարձրացումը՝ իրը միահեծան թագուհի՝ փառքի և զօրութեան գահու մը վրայ. սիրահարը պարտաւոր էր, էսոր շնորհներուն արժանանալու համար՝ էսոր հիացումը գրաւել դիւցազնական արարքներով, կամ տաղանդի, ազնուութեան արտասովոր աղացուցումներով. հոտ է ուրեմն որ հիմնուած է ինչ որ յետոյ ֆրանսական քաղաքակրթութեան փառքը պիտի կազմէր, ասպետական ոգին, նուրբ կնահաճութիւնը (galanterie), բարեկրթութիւնը—բոլորը արդինք կնոջ տրուած այդ բանաստեղծականորէն գերադաս դիրքին և կնոջ հաճելի ըլլա-

Ճու եղանակին գերազնիւ ըմբոնման. փրովանսական ժողովրդին պարծանըը կարող է կազմել՝ բարոյական այդ վեհ ու նուռը հոգեբանութեան առաջին տարրերն ստեղծած և կերպով մը նոր ժամանակներու ոգւոյն ու գեղեցկագիտութեան առաջին հիմաքարը դրած ըլլալը. Այդ «քուրթուա» բանաստեղծութեան մէջ ամենէն աւելի հոչակաւոր եղած են կիրօ աը Պոլնէլ, որ «Թրուպատուրներու պետ» կոչուած է, Ուէմոն աը Միրավաւ, Առնո աը Մարէօյլ, Փէյր Վիտալ, Գերթրան աը Պորն, Սորտէլ, Գերթրան ա' Ալամամոն, Ֆոլքէ, ևն.

Դաղափար մը տալու համար փրովանսական այդ հին բանաստեղծութեան վրայ, ստորև կը դնեմ թարգմանութիւնը՝ հոչակաւոր «Թանսոն»-ի մը (մրցաքերթուած), զոր յօրինած են Սորտել և Գերթրան ա' Ալամամոն թրուպատուրները:

Սորտէլ.—Եթէ ստիպուէիք կորսնցնել կիներու հրճուանքը, հրաժարի այն սիրուհիներէն զոր ունեցած էք և զոր պիտի ունենաք, և կամ ձեր ամենէն աւելի սիրած կնոջը համար զոնել պատիւը զոր վաստկած էք կամ պիտի վաստկիք՝ ասպետութեամբ, երկուքէն մը պիտի նախընտրէիք.

Պերթրան. Կիները, զոր սիրեցի, այնքան զիս մերժեցին, այնքան քիչ բարիք ստացայ էնոնցմէ, որ չեմ կրնար զիրենք ասպետութեան հետ բաղդատել: Թող ձեր բաժինն ըլլայ սիրոյ յիմարութիւնը, որու վայելքն այնքան ունայն է: Վաղեցէք այդ հաճոյքներուն ետեէն որ՝ երբ մարդ անոնց կը տիրանայ՝ արժէքնին կը կորսնցնեն. բայց զէնքի ասպարէզին մէջ, իմ առջևս միշտ նորանոր աշխարհակալութիւններ կը տեսնեմ ընելու, միշտ նոր փառք մը՝ վաստկելու:

Սորտէլ. Ուկը է փառքը առանց սիրոյ: Ի՞նչպէս կարելի է ձեւ հրճուանքն ու կնահաճութիւնը վէրքերու և կոիներու համար: Մարաւը, անօթութիւնը, արևմէն այրիլը, ցուրտէն փատնակը՝ նախընտրելի կրնան ըլլալ սէրէն: Ա՛հ, յօժարակամ ձեզի կը թողւած այդ առաւելութիւնները՝ ունենալու համար գերագոյն երջանկութիւնը որ ինծի կը սպասէ իմ գեղուհոյս մօտ:

Պերթրան.—Ի՞նչ, պիտի համարձակիք ձեր սիրուհւոյն առջն երեալ, եթէ չէք համարձակիք զէնք առնել կուտելու համար: Զկայ ճշմարիտ հաճոյք՝ առանց քաջութեան. ան է որ մարդս կը բարձրացնէ ամենամեծ պատիհներուն. սիրոյ կեղծ հրճուանքները ստորնացումն ու անկումը յառաջ կը բերեն անոնց զոր կը հրապուրեն:

Սորտէլ.—Կը բաւէ որ քաջ ըլլամ զիս սիրող կնոջ աշ-քին, միւսներէն արհամարհութիւը հոգս չէ. էնկից ստանամ բո-լոր երջանկութիւնս, ուրիշ երանութիւն չեմ ուզեր, Գացէք կործանեցէք դղեակներն ու պարիսպները, ես իմ սիրականէս անուշ համբոյր մը պիտի ընդունիմ: Դուք Փրանսացի մեծ իշ-խաններուն համարումը պիտի վաստկիք. բայց որչափ աւելի գին ունին ինձի համար սիրականիս անմեղ շնորհները քան նիզակի ամենէն աղւոր հարուածները:

Պերթրան.—Բայց, Սորտէլ, սիրել առանց քաջութեան, սիրուած կինը խարել է: Չեմ ուզեր սէրը էնոր որուն կը ծա-ռայեմ, եթէ էնոր համարմանը չեմ արժանացած. այդքան գէշ վաստկուած բարիք մը զիս գժբաղդ պիտի ընէր: Զեզի պահե-ցէք ուրեմն սիրոյ խարէութիւնները և ձգեցէք ինձի զէնքե-րու պատիւը, քանի որ սուտ երջանկութիւն մը օրինաւոր հրճուանքի մը հետ բաղդատելու չափ անմիտ էք»:

Փրովանսական այդ հին գրականութենէն մնացած են նաև բազմաթիւ գործեր, վարդապետական, պատմական, աս-տուածաբանական, որոնց մէջ սակայն ուժեղ ինքնատպու-թիւն չի տեսնուիր: Դիւցազներգական և թատերական ճիւղե-րը գրեթէ բոլորովին կը պակսին—մինչ Փրանսական միջնա-դարեան գրականութիւնը՝ կը հաշուէ բազմաթիւ կարեոր և ուժեղ գործեր՝ այդ ճիւղերուն մէջ՝ իր chausson de geste—ե-րով, ասպետական վէպերով, երգիծական ու ողբերգական նախ-նական բայց ինքնատիպ թատրերգութիւններով,—և ինչ որ փրո-վանսերէն լեզուով արտադրուած կայ այդ ճիւղերուն պատ-կանող՝ թուլ է և տկար: Ուշագրաւ են միայն պատմական, եր-գիծական քերթուածները, որոնց մասնաւորապէս ժդ. դարուն վերջերը արտադրուած են, ներջնչուած այն քաղաքական բու-ռըն պայքարներէն որոնց մէջ կ'ոգորէր Հարաւը՝ արդէն վաանդ-ներով պաշարուած, և որոնց մէջ կենդանի և ուժեղ շունչ մը՝ ժողովրդին աղիքներէն բղխած՝ կը թրթույ: Ֆրանսայի հետ միացումէն յետոյ, այդ գրականութիւնը կը թևատուի բնակա-նաբար: Թրուպատուբներէն շատերը, կը հեռանան Փրովանսէն, իտալիոյ, Սպանիոյ, Փորթուկալի արքունիքները կ'երթան ի-րենց տաղանդը աղատորէն փայլեցնել Մնացածները կը ճգնին հայրենի բանաստեղծութիւնն ու լեզուն պահպանել, բայց ի-րենց ճիգն անզօր կըլլայ՝ Փրանսական քաղաքակրթութեան հեղեղաձև խուժումին հանդէպ: «Օք»-ի լեզուն դատապար-

տուած էր յաղթուիլ «Օյլ»-ի լեզուէն, *) և այդպէս ալ եղաւ։ Ժողովուրդը շարունակեց խօսիլ այդ լեզուն, գտնուեցան միշտ՝ Ժէ. դարէն մինչև մեր օրերը՝ գրագէտներ և բանաստեղծներ որ փրովանսերէն լեզուով գործեր արտադրեցին, բայց Փրովանսի արտադրած տաղանդները ամենամեծ մասամբ Փրանսական քաղաքակրթութեան յարեցան, և Փրովանսը հետզհետէ մտքով ու հոգով Փրանսական ընդհանուր կեանքով ապրեցաւ ԺԶ. դարուն՝ Պելլո տը լա Պելլոտիէռ, Ժէ դարուն՝ Կուտլէն և Սապոլի, Ժէ. դարուն՝ Ֆալը և Փէյրո ճիգեր ըրին փրովանսական գրականութիւնը լրջօրէն վերականգնելու և փրովանսերէնը ժրանսայի հարաւին գրական տիրող լեզուն դարձնելու համար, սակայն չյաջողեցան. այդ ճիգէն ուրիշ բան չմնաց բայց եթէ իրենց արտադրած գործերը, որոնց ոմանք ինչպէս լա Պելլոտիէռի և Ֆալը երկերը՝ իրական արժէք ունին։ Ասոնք ունեցան, սակայն, յաջորդներ, Փրովանսական գրականութիւն մը գոյութիւն չունէր այլ ևս, սակայն փրովանսերէն գրող գրագէտներու, թէպէտ ցանցառ, բայց շարունակական շղթայ մը կ'երկարի Ժէ. դարէն մինչև Միսթրալ. Ժէ. դարու վերջը և ԺԹ. դարուն սկիզբը, (1767-1825) երևած է Ֆալը տ' Օլիվէ, որ արտադրած է բանաստեղծի ու գիտունի ընդարձակ ու բազմազան գործ մը, ուր փրովանսականը շատ մաքուր ու զուտ ձևով մը կը փայլի, լեզուի այդ մաքրութիւնը՝ Ֆալը տ' Օլիվէի մէջ՝ մասնաւորապէս նշանակելի է, որովհետեւ ատիկա սկսած էր՝ շատոնց՝ պակսիլ փրովանսերէն գրող գրագէտներուն մէջ. լեզուն, գրագէտներէն քուած, ժողովրդին բերանը միայն մնացած ըլլալով, գոհեկացած, ինկած էր, մանաւանդ Փրովանսի մէջ, ուր բաւական թուով թրուապատրներ երևած են վերջին երեք չորս դարերուն, բայց որոնք լեզուն զտելու, իր նախկին մաքրութեանը մէջ վերահաստատելու ջանք չեն ըրած. ասոնց մէջ եղած են քանի մը ուժեղ և ինքնատիպ բերթողներ, ինչպէս Վիքթօր Ժելու Մարսիլիացին, (1806-1885) որուն ընկերվարական ներշնչմամբ երգերը անզուգական են՝ ըստ Փոլ Մարիեթոնի՝ իրենց իրապաշտ ու վայրագ ուժգնութեամբ։ Ֆալը տ' Օլիվէ, զոր

*) Ֆրանսականը և փրովանսերէնը «լանկ տ' օյլ» և «լանկ տ' օք» կը կոչուէին, «այո» բառին երկու լեզուին մէջ ստացած ձևին համեմատ. Փրանսականին մէջ «օյլ» (յետոյ «ուի»), փրովանսերէնին մէջ «օք»: